ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՀՀ ԴՐԱՄԻ ԱՐԺԵՔԱՎՈՐՈՒՄ. ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

19 Սայաթ Նովա, Երևան
Հեռ.՝ +3741 58-26-38, Ֆաքս՝ +3741 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Իրավիճակի նկարագրության փոխարեն

«Հայաստանի տնտեսություն» անունով մանկիկն անկողնային հիվանդ է: Թույլ իմունային համակարգը (ինստիտուցիոնալ համակարգը), չպլանավորված սնունդը (եկամուտների քաղաքականությունը) և ստամոքսի խոցը (ոչ մրցակցային, մոնոպոլ շուկաներ) իրենց գործն արեցին. չլսված բան՝ դեռ տասնհինգամյակը չբոլորած մանչուկի ճնշումը բարձրանում է (արժույթն արժեքավորվում է):

Բժիշկ-սանիտարը (ԿԲ) լուրջ մասնագետ է՝ 36,6 աստիճան ջերմության (մինչև 3 տոկոս գնաճ) ապահովման իր գործը փայլուն է անում՝ ընդսմին «զսպաշապիկ» հագցնելով օրգանիզմի պայքարելու ունակությանը: Ընտանեկան բժիշկը (կառավարություն), ում հսկողության ներքո է մեծանում փոքրիկը, ոչինչ չասող հայացքով դիտում է, թե ինչպես է սանիտարն անում իր «կարևոր» գործը: Գլխավոր բժիշկը, ով նաև երեխայի հայրն է, դեռ իր կարծիքը չի արտահայտել:

Դարձ ի շրջանս յուր

Հայրենական արտադրողի «մեջքին կանգնելու» քաղաքականությունը, որ քայլ առ քայլ իր արդյունքներն էր տալիս մինչև 2004 թվականը, այլևս անցած փուլ է: Ուժեղացող դրամ նշանակում է. «բավ է գլուխ գովեցինք, թե հայրենական արտադրողը ներքին շուկայից հաստատապես դուրս է մղում ներմուծված ապրանքը»՝ շուտով կրկին արտերկրյա հավը, ձուն, քաղցրավենիքն ու մսեղենը մեր սեղաններին իրենց արժանի տեղը կունենան, ուժեղացող դրամը նշանակում է նաև, որ արդեն այս աշնանը հայ գյուղացին կհասկանա, որ իր խաղողն իրացնելիս պարտադիր չէ, որ տարեցտարի իրեն ավելի ու ավելի բարձր գին առաջարկեն: Այս շարքը կարելի է անընդհատ շարունակել:

Երկու կարծիք լինել չի կարող. Հայաստանում իրականացվող տնտեսական քաղաքականությունը փոխվել է: Այլ հարց է՝ գիտակցվա՞ծ, թե ոչ:

Ներմուծողների գերշահույթների դեմ լրագրողական արշավ. խա՞նդ, թե լրջագույն ահազանգ

Մի ակնհայտ ճշմարտություն, թերևս, մինչև վերջ չի գիտակցվել մեզանում: Ներմուծվող ծխախոտը, հացամթերքը, վառելիքը, շաքարավազն ու այլ ապրանքները գնաճի հաշվարկման զամբյուղում էական մասնաբաժին են գրավում: Երբ դրանց գները, հայտնի պատճառներով, անհաղորդ են արժեքավորմանը՝ ոչ մի կերպ չեն նվազում, ապա այդ մասով գների մակարդակի անկում չի արձանագրվում, որը հնարավորություն կտար կենտրոնական բանկին գների մակարդակը հետ բերելու համար նոր դրամային միջոցներ հանել տնտեսություն: Դա, իր հերթին, կմեղմեր դրամ-դոլար վայրիվերումները. «Շուկաներն» ի վիճակի են և՛ կարճաժամկետ և՛ երկարաժամկետ ինքնակարգավորման: Հետևաբար, այսօր տնտեսության համար մոնոպոլ ներմուծման վնասը շատ ավելի մեծ է, քան այն գումարները, որ հանիրավի գրպանվում են: Պետք չէ կասկածի տակ դնել դասական հարկաբյուջետային/դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունը, դրանք լիակատար են միայն մի շրջանակում, որի բոլոր հատվածները մրցակցային են:

Գնաճ-փոխարժեք հոգեմաշ երկվությունը

1. Գնաճ - պատասխանատուն կենտրոնական բանկն է (ցնցումներ չկան): Տնտեսագետները պնդում են, որ եթե նույնիսկ այս ցուցանիշը ծրագրավորված մակարդակից խախտվի 1-2 տոկոսով, իրականում ոչ մի սարսափելի բան էլ չի պատահի:
2. Փոխարժեք – քաղաքականությունը ազատ լողացող է, ոչ-ոք պատասխանատվություն չի ուզում վերցնել:

Կենտրոնական բանկը, կարծես, վախենում է կորցնել ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն իրականացնողի համբավը: Իսկ ու՞մ համար ենք ձևավորում այդ համբավը՝ թերևս միջազգային հանրության: Իսկ ու՞մ առջև է պատասխանատու կենտրոնական բանկը՝ անշու՛շտ ՀՀ բնակչության: Արդյո՞ք ազատ լողացող փոխարժեքի քաղաքականության համբավը Հայաստանին ինչ-որ բան տվել է: Դժվար է միանշանակ պատասխանել այո, ինչպես նաև դժվար է միանշանակ պատասխանել՝ ոչ: Ասել, թե ՀՀ արտերկրյա ներդրումների համար սա վճռորոշ դեր է խաղացել, սխալ կլիներ:

Գործարար հատվածն այսօր հայտնվել է անորոշության մեջ: «Դրամի» պաշտպանները կարող են հեգնել գործարարներին, որ վերջիններս պիտի «դրամային» մտածեն: Սա թերևս իրականությունից կտրվելու փորձ է, և Հայաստանը այն երկրներից չէ, որն արտարժույթից նվազ կախվածության մեջ գտնվի: Առկա է նաև մեդալի հակառակ կողմը. դրամի՝ կուրորեն, իրականությունից կտրված առաջ մղումը կարող է ձևավորել սխալ սպասումներ, որոնք էլ իրենց հերթին ճնագնդիկի էֆեկտով առավել կվատթարացնեն այսօր ձևավորված վիճակը: Հայաստանի Կենտրոնական Բանկն ի վիճակի չէ կլանելու արտարժույթի նման ծավալներ և փոխարինելու դրանք դրամով: Խանգարող հանգամանքը դրամական էքսպանսիայի հետևանքով ինֆլյացիոն մտավախություններն են: Սակայն հարց է ծագում. եթե կենտրոնական բանկը վստահ է, որ տնտեսության դրամայնացումը հենց այսօրվա հրամայականն է, ապա պետք է նույն կերպ վստահաբար Հայաստան մուտք գործած արտարժույթը կլանելու գործառույթ ստանձնի: Մինչդեռ.

1. փոխարժեքը մեզանում լողացող է: Հին արմատներ ունեցող մտավախություն կա, որ եթե կենտրոնական բանկը ձեռք է բերում արտարժույթ՝ մեծացնում է զուտ արտաքին ակտիվները, ապա դա փոխարժեքի կարգավորման քաղաքականություն է՝ ինչը տաբու է,

2. գոյություն ունի դրամավարկային քաղաքականության ծրագիր, որով արդեն իսկ ամրագրված է դրամական բազայի ծրագրավորված մակարդակ, որի խախտումը կարող է հանգեցնել բարձր գնաճի՝ տաբու թիվ 2:

Ձավեշտ է, սակայն երկու տաբուներն էլ որոշակի միֆ են պարունակում: Նախ լողացող փոխարժեք չի նշանակում, որ կենտրոնական բանկը երբեք արտարժութային գործարքներ չպետք է անի: Դրա կարիքը հաճախ է պետք գալիս, և խոհեմ քաղաքականությունը ենթադրում է ժամանակի մեջ այդ կարիքների սահուն բավարարում: Կենտրոնական բանկը կարող է հայտարարություններով հանդես գալ, թե ինչքան արտարժույթ է պատրաստվում ձեռք բերել շուկայից, և դա նույնպես կլինի փոխարժեքի շուկայական քաղաքականություն: Չպետք է հետաձգել գործարքները մինչև դանակը ոսկորին հասնի, և վախենալ միջազգային առանձին փորձագետների քննադատությունից:

Իսկ գուցե հենց պարադի՞գմը փոխելու ժամանակն է եկել:

Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ ապրիլի 29-ի «ՀՀ դրամի արժեքավորում. նախադրյալներ, հետևանքներ» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:
Քննարկումը կազմակերպվել էր Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի աջակցությամբ: